

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-11>

ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ
*Իրավաբանական գիտությունների
թեկնածու*
ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

RAFAEL VARDANYAN
Candidate of Law
ARMEN SHUKURYAN
*Senior researcher at the Institute of Philosophy, Sociology and
Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Candidate of Law*

РАФАЭЛЬ ВАРДАНИЯН
Кандидат юридических наук
АРМЕН ШУКУРЯН
*старший научный сотрудник Института философии,
социологии и права НАН РА,
Кандидат юридических наук*

**ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ (ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ) ԻՐԱՎԱԿԱՆ
ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**GENERAL CHARACTERISTICS AND FEATURES OF THE ROMANCE
AND GERMANIC (CONTINENTAL) LEGAL FAMILY**

**ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОСОБЕННОСТИ РОМАНО-
ГЕРМАНСКОЙ (КОНТИНЕНТАЛЬНОЙ) ПРАВОВОЙ СЕМЬИ**

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի մեջ մտնող ազգային իրավունքի ձևերին ներհատուկ միասնական պատմական արմատները և հիմնադիր ընդհանուր իրավական սկզբունքները կանխորոշեցին նաև դրանց նույնությունն ու ընդհանրության մի ամբողջ շարք

այլ կարևոր հայեցակարգեր¹:

Այսպես, ռոմանագերմանական իրավաքաղաքական ուսմունքի համաձայն՝ այդ իրավական ընտանիքի մեջ մտնող իրավունքի ազգային համակարգերն ունեն նմանօրինակ կառուցվածք: Իրավունքը բաժանվում է մասնավորի և հանրայինի: Իրավունքի տարբեր ազգային համակարգերն ներառում են իրավունքի նմանվող ճյուղեր, որոնք իրենց բովանդակությամբ բաժանվում են իրավունքի իրենց բովանդակությամբ միասեռ նորմերիխմբեր միավորող իրավական ինստիտուտների:

1) Ռոմանագերմանական իրավական ընտանիքի առանձնահատկություններից է միասեռ հարաբերությունների հանրագումարը կարգավորող իրավունքի վարքագծի վերացական-համընդհանուր կանոնի բնույթի, իմաստի և նշանակության միատեսակ հասկացությունը: Ռոմանագերմանական իրավունքի նորմն իր այդ վերացական համընդհանրությամբ տարբերվում է նախադեպային իրավունքի համակարգում (ընդհանուր իրավունքի իրավական ընտանիքում) կոնկրետ գործով դատական վճռով սահմանվող կազուիստական կանոնից (տվյալ կազուի, առանձին դեպքերի համար կանոնից):

Իրավունքի նորմի էության և բնույթի այսպիսի հասկացողությունն ընկած է նաև նորմատիվ-իրավական ակտի ռոմանագերմանական հայեցակարգի, պետության նորմատիվ-իրավական գործունեության և գործող իրավունքի համապատասխան (կոդիֆիկացիայի) հիմքում: Ռոմանագերմանական օրենսգրքերը, այլ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը՝ որոշակի ձևով համակարգված (այս կամ այն աստիճանի) վերացական ընդհանուր իրավական նորմերի համալիրներ են, ոչ թե ընդհանուր իրավունքի կազուիստական կանոններ, դատական կամ վարչական նախադեպերի ժողովածուներ:

2) Ռոմանագերմանական ընտանիքի երկրների գործող իրավունքն իր վերացական-նորմատիվ բովանդակության շնորհիվ աչքի է ընկնում առավել հստակությամբ, որոշակիությամբ, պարզությամբ, տեսանելիությամբ և մատչելիությամբ: Այն հեշտությամբ կարելի է բարեփոխել և փոփոխելանհրաժեշտ ուղղությամբ: Սակայն դա ունի նաև թերություններ, որոնք պայմանավորված են համապատասխան նորմի գործողության տակ ընկնող առանձին դեպքերի կիրառմամբ, իրավունքի նորմի իմաստի վերացական-ընդհանուր պատշաճ կոնկրետացման դժվարություններով: Դրանով է պայմանավորված այն մեծ ուշադրությունը, որ իրավունքի ռոմանագերմանական համակարգի տեսությունում և պրակտիկայում անդրադարձ է կատարվում գործող իրավունքի մեկնաբանման հիմնահարցին:

Ռոմանագերմանական իրավունքի վերացական նորմատիվ բնույթը հստակորեն ներկայացվում է նաև դրա աղբյուրների համակարգում: Ռոմանագերմանական իրավունքը գրավոր իրավունք է՝ հիմնականում կազմված գրավոր ձևակերպված նորմատիվ իրավական ակտերից (օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից):

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի բոլոր ազգային համակարգերում իրավունքի հիմնական աղբյուրն օրենքն է: Օրենքներն ընդունվում են բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից կամ հանրաքվեի միջոցով:

Նորմատիվ իրավական ակտերի համակարգում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված է գրավոր սահմանադրությունը (պետության հիմնական օրենքը), որն իրավական հիմք է մնացած բոլոր (սահմանադրական և սովորական) օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համար: Սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հատուկ սահմանադրական

¹ Տե՛ս *Марченко М.Н.*, Сравнительное правоведение. Общая часть М., 2001.

դատարանները (դաշնային սահմանադրական դատարանը՝ ԳԴՀ-ում, սահմանադրական դատարանը՝ Իտալիայում) կամ բարձրագույն ընդհանուր դատական և այլ պետական ինստիտուտները:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի աղբյուրների համակարգում ավանդաբար կարևոր դեր են խաղում օրենսգրքերը՝ ճյուղային բնույթի (կոդիֆակացված) նորմատիվ իրավական ակտերը: Չնայած որ դրանք օժտված են սովորական օրենքի իրավաբանական ուժով, սակայն, ըստ էության, կենտրոնական տեղ են զբաղեցնում և առաջատար դեր են խաղում օրենսդրության համապատասխան ճյուղում:

Ռոմանագերմանական իրավունքի երկրներում հետագա ամբողջ օրինակարգային (կոդիֆիկացիոն) գործունեության վրա մեծ ազդեցություն թողեցին նապոլեոնյան օրենսգրքերը (1804 թվականի Քաղաքացիական օրենսգիրքը, 1807 թվականի Առևտրային օրենսգիրքը, 1808 թվականի Քրեական դատավարական օրենսգիրքը, 1810 թվականի Քրեական օրենսգիրքը): Ավելիուշ ընդունված Բելգիայի և Լյուքսեմբուրգի քաղաքացիական օրենսգրքերը շատ կողմերով համապատասխանում են ֆրանսիական նմուշին: Նշանակալից օրինակությամբ աչքի են ընկնում Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը (1896 թվական) և Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգիրքը (1881-1907 թվականներ)²:

3) Ռոմանագերմանական իրավական ընտանիքում՝ որպես իրավունքի աղբյուր, նշանակալից դեր են խաղում գործադիր իշխանության տարբեր մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերը (դեկրետները, որոշումները, շրջաբերականները, հրահանգները, կանոնակարգերը և այլն): Այդ նորմատիվ ակտերը, որպես կանոն, ընդունվում են «ի կատարումն օրենքի» և ունեն ենթաօրենսդրական բնույթ: Ընդ որում, օրենքին այսպիսի ենթաօրենսդրական ակտերի համապատասխանությունն ապահովելու համար իրականացվում է դատական վերահսկողություն (ԳԴՀ-ում բոլոր ընդհանուր դատարանների, Ֆրանսիայում հատուկ վարչական դատարանների կողմից):

Գործադիր իշխանության նորմատիվության հատուկ տեսակ է պատվիրակված օրենսդրությունը, երբ գործադիր իշխանության այսպես այնպիսի մարմինն օժտվում է հարաբերությունների որոշակի ոլորտի ինքնուրույն նորմատիվ իրավական կարգավորման լիազորություններով: Այսպես, 1958 թվականի ֆրանսիական Սահմանադրության համաձայն՝ խորհրդարանի օրինաստեղծ լիազորությունները սահմանափակված են՝ ընդհանուր սկզբունքներ և իրավական կարգավորման նորմեր սահմանող օրենքներ ընդունելու իրավունքով: Դրա հետ միասին ճանաչվում է գործադիր իշխանության մարմինների՝ ինքնավար և խորհրդարանի օրենսդրական իշխանությանը չենթարկվող, նորմաստեղծ, լիազորությունների ոլորտը (այսպես կոչված՝ կանոնակարգող իշխանությունը): Նման ակտերի սահմանադրական սկզբունքներին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ֆրանսիայի պետական խորհուրդը:

4) ԳԴՀ-ում և բազմաթիվ այլ երկրներում գործադիր իշխանության մարմիններն օժտված չեն նման ինքնավար (օրենսդրությանը չենթարկվող) նորմաստեղծության իրավունքով:

Ռոմանագերմանական իրավական աղբյուրների համակարգում սովորույթը հիմնականում ունի օժանդակ դեր՝ անհրաժեշտ դեպքերում լրացնելով գործող օրենսդրությունը:

Պոզիտիվիստները, ընդհանրապես չեն ընդունում սովորույթը, որպես գործող իրավունքի աղբյուր, իսկ դրան հակառակ՝ իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչները գերազանցապես են սովորույթի դերն ազգային իրավական համակարգում:

² Տե՛ս Koschaker P. Europa und des Römische Recht. Berlin. 1953, էջ 132-133:

5) Ռոմանագերմանականիրավական ընտանիքի երկրներում դատարանըգործում է օրենքի հիման վրա և օրենքի շրջանակում: Այստեղ չկա ընդհանուր իրավունքին ներհատուկ նախադեպի կանոն, ուստի, այստեղ դատարանն օժտված չէ իրավաստեղծ լիազորություններով և իրավունք չունի ստեղծել իրավունքի նոր նորմեր: Սակայն դատարանն ըստ ֆրանսիացի մեծանուն գիտնական Ռենե Դավիթի «դատական նախադեպը» (պրակտիկան) համարվում է իրավունքի աղբյուր ռոմանագերմանական իրավական համակարգում:

Դատական պրակտիկան ստեղծագործական դեր է խաղում իրավական համակարգում՝ լրացնելով իրավունքի բացերը կամ հարթելով իրավական հակասությունները: Իհարկե, ռոմանագերմանական իրավական համակարգում դատական պրակտիկան այն հեղինակությունը չունի, ինչն ունի նորմատիվ իրավական ակտը, հատկապես՝ օրենքը:

1) Ռոմանագերմանական իրավական ընտանիքում երկար ժամանակ դոկտրինան եղել է իրավունքի հիմնական աղբյուր: Այն, որպես իրավունքի հիմնական սկզբունքներ, մշակվել է XII-XIV դարերում եվրոպական համալսարաններում (այստեղից էլ՝ «համալսարանական իրավունք»):

Եվ միայն պոզիտիվ օրենսդրության համակարգման հետևանքով դոկտրինան իր տեղը գիջեց օրենքի գերակայությանը (XVII-XIXդդ.)³:

Դոկտրինան միշտ էլ մայրցամաքային իրավական համակարգում կարևոր դեր է խաղացել (ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության մեջ):

2) Մայրցամաքային իրավական համակարգում էական դեր են խաղում «իրավունքի ընդհանուր սկզբունքները», որոնք տարալուծված են գործող օրենսդրության մեջ:

Ընդ որում, մեծ ուշադրություն է դարձվում դատական պրակտիկայի միատեսակությանը: Այդ առումով զգալի դեր ունեն բարձրագույն դատական մարմինների որոշումները և պարզաբանումները: Առանձին երկրներում (օրինակ՝ Պորտուգալիայում) գերագույն դատարանի պլենումի սահմանած դրույթներն ունեն նորմատիվ իրավական բնույթ:

3) Եվ վերջապես, նշենք, որ ռոմանագերմանական իրավական համակարգի կարևոր առանձնահատկություններից հետևյալը. այս համակարգում պարտավորական իրավունքը, որը դասական իմաստով հայտնի չէ ընդհանուր իրավական համակարգին, գրեթե նույն նշանակությունն ունի, ինչը՝ թրաստը՝ ընդհանուր իրավունքում:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքում էական նշանակություն ունի իրավաբանականդոկտրինան(իրավունքի տեսությունը, իրավաստեղծության ու իրավակիրառմանընդհանուր և կոնկրետ հարցերով գիտական աշխատությունները):Դա ունի հին պատմական արմատներ, քանի որ հենց XIII - XIX դարերի համալսարանական իրավաբանական գիտությունն է մշակել ռոմանագերմանական իրավունքի հիմնական գաղափարները, սկզբունքները և կառույցները, ու իրավունքի գիտական դոկտրինը(այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը»), որը հարյուրամյակների ընթացքում մայրցամաքային իրավունքի համակարգերում խաղացել է իրավունքի հիմնական աղբյուրի դերը, մինչև որ այդ դերը (սկսած XIX դարից) անցել է օրենքին:

Արդի պայմաններում դոկտրինան զգալի ազդեցություն է թողնում գործող իրավունքի իրավահասկացողության և պարզաբանման ամբողջ գործընթացի, իրավունքի սկզբունքների և նպատակների մեկնաբանման, իրավունքի նորմի իմաստի բացահայտման հնարքների ու մեթոդների, դրանց կիրառման և այլնի վրա: Դա ունի գործնական մեծ նշանակություն, քանի

³ См. История государства и права зарубежных стран, Часть 1, Отв. ред. О. А. Жидков и Н. А. Крашенинникова, М., 1996:

որ ռոմանագերմանական իրավական ընտանիքի մի շարք երկրներում իրավունքի ընդհանուր սկզբունքները (վերպոզիտիվ իրավունքի գաղափարները և արժեքները) ունեն գործող իրավունքի նորմերի ուժ և վերջիններիս հետ հակասության դեպքում օժտված գերապատվությամբ: Համաիրավական սկզբունքների այսպիսի դերը հիմնված է ոչ միայն ռոմանագերմանական իրավունքի ավանդույթների, այլ նաև մի շարք մայրցամաքային երկրների ժամանակակից սահմանադրություններում ամրագրված՝ մարդու ի ծնե և անօտարելի իրավունքների մասին բնական-իրավական սկզբունքների ու նորմերի, իրավական արժեքների և այլնի վրա:

Ըստ էության, խոսքն այն մասին է, որ սահմանադրականորեն ճանաչված և ամրագրված բնական իրավունքը (բնական իրավունքի սկզբունքների, մարդու բնական իրավունքների և ազատությունների և այլնի տեսքով) գործում է որպես պոզիտիվ իրավունքի գերապատիվ աղբյուր:

Այսպես, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը պաշտպանում է այն դիրքորոշումը, որի համաձայն՝ ԳԴՀ-ի Սահմանադրությունը ներառում է ոչ միայն իր տեսքում շարադրված պոզիտիվ իրավունքի նորմերը, այլ նաև մի շարք «ընդհանուր սկզբունքներ», որոնք Սահմանադրության հեղինակը չի կոնկրետացրել պոզիտիվ նորմերի տեսքով: Բացի դրանից, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը ճանաչում է այն «վերպոզիտիվ իրավունքի» առկայությունը և գործողությունը, որը սահմանափակում է երկրի սահմանադրությունն ընդունող բուն օրենսդրի, սահմանադրի իշխանությունը: Այսպիսով, օրենսդիրը (Սահմանադրության հեղինակը) չպետք է և իրավունք չունի ամեն ինչ կարգավորել իր հայեցողությամբ՝ խախտելով վերպոզիտիվ իրավունքի («իրավունքի գաղափարի») պահանջները: Պոզիտիվ սահմանադրական իրավունքի (սահմանադրության պոզիտիվ նորմերի) «վերպոզիտիվ իրավունքի» պահանջներին չհամապատասխանելու դեպքում գերապատվությունը տրվում է «վերպոզիտիվ իրավունքին» («իրավունքի գաղափարին») և սահմանադրական դատարանը պարտավոր է այդ դիրքերից գնահատել Սահմանադրության համապատասխան պոզիտիվ նորմի ոչ իրավական բնույթը:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի իրավունքի յուրաքանչյուր ազգային համակարգին ներհատուկ է իր առանձնահատուկ գծերը:

Հատկապես ուշագրավ են ֆրանսիական և գերմանական իրավական համակարգերը, ինչպես նաև՝ սկանդինավյան երկրների, Լատինական Ամերիկայի և Ճապոնիայի իրավական համակարգերը:

Հանրային և մասնավոր իրավունքի բաժանման ելակետային, հիմնական չափանիշներն են հանդիսանում.

Առաջին, հանրային իրավունքին բնորոշ է «իշխանություն-ենթակայություն» հարաբերությունը, իսկ մասնավոր իրավունքին՝ «սուբյեկտների իրավահավասարությունը»:

Երկրորդ, հանրային իրավունքը կառուցված է (վերադասության) սուբորդինացիայի սկզբունքի վրա, իսկ մասնավոր իրավունքը՝ իրավահարաբերության սուբյեկտներինը կամքի կոորդինացիայի (համադասության) սկզբունքի վրա:

Annotation. The article thoroughly discusses and focuses on the general characteristic features of the Romance and Germanic (continental) legal family, in particular, the concept of law, its sources, codification problems and other related issues.

Аннотация. В данной статье детально рассматриваются и анализируются общие характерные черты романо-германской (континентальной) правовой семьи, в частности, изучается понятие «право», его источники, затрагиваются проблемы кодификации и другие вопросы, касающиеся темы.

Բանալի բառեր - ռոմանագերմանական (մայրցամաքային), իրավունքի աղբյուրներ, օրինակարգում (կողմ-ֆիկացիա), օրենք, դատական նախադեպ, սովորույթ:

Keywords: Romance and Germanic (continental), sources of law, codification, law, judicial precedent, custom.

Ключевые слова: романо-германская (континентальная), источники права, кодификация, право, судебный прецедент, обычай.

Վարդանյան Ռ. - իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ rafayelvardanyan@icloud.com:

Շուքրյան Ա. - ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ shuqur@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 14.04.2023 թ., տրվել է գրախոսության 14.04.2023 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.: